ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<<30 օգոստոսի>>2012թ. N 353

ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2008 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 17-Ի N405 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի երկրորդ մասի 1-ին կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր քաղաքի թիվ 24 շենքի թիվ 405 բնակարանի բնակիչ Հասմիկ Հովհաննիսյանի 2012 թվականի օգոստոսի 30-ի դիմումը.

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2008 թվականի դեկտեմբերի 17-ի <<Հասմիկ Հովհաննիսյանին, Արայիկ Մկրտչյանին, Նելլի Հովհաննիսյանին և Առնակ Մկրտչյանին պետական բնակարանային ֆոնդի բնակարանի անհատույց մասնավորեցման մասին>> N405 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝
   1) Որոշման 1-ին կետում <<երկուսենյականոց բնակարանը՝ 28 քմ բնակելի մակերեսով>> բառերը փոխարինել <<երեքսենյականոց բնակարանը՝ 58.95 քմ ընդհանուր մակերեսով, 37.8 քմ բնակելի մակերեսով,>> բառերով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ ***Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ***